ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 397-Ա

«ԱՂՎԱՆԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-ԻՑ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝

որոշում եմ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ «Աղվանիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 01.09.2023 թվականից մինչև 30.09.2026 թվականը դպրոցի կողմից կատարված աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով:
2. Հաստատել աշխատանքային խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
3. Աշխատանքային խմբին՝ մշտադիտարկումն իրականացնել սույն թվականի օգոստոսի 26-ից և արդյունքները ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին՝ համապատասխան հաշվետվությամբ:

2026-08-25 17:35:06 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. օգոստոսի 25
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
«25» օգոստոսի 2026թ.
N - 397Ա որոշման

ԿԱԶՄ

«Աղվանիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 01.09.2023 թվականից մինչև 30.09.2026 թվականը դպրոցի կողմից կատարված աշխատանքներն ուսումնասիրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Մերի Գանդալյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/
Մարինե Աբգարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ
Արփինե Բաղդասարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

2026-08-25 16:45:59 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար՝ **Է.Մարտիրոսյան**